Հաստատված է
ՀՀ կրթության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2024 թվականի նոյեմբերի 22-ի N7-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 4
4. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ 4
5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10
6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ 12

6.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 12

6.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 14

6.3.ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 17

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ 19

7.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 19

7.1.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ 20

7.1.2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 21

7.1.3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 21

7.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 22

7.2.1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ 22

7.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 37

7.3.1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ 37

7.3.2. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 40

7.3.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 41

8. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (I, II, III ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ) 42

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 42

10. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱՁԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 43

11. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 45

12. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 49

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ծրագրում գործածվող հապավումները՝

ՀՎ՝	հանրակրթության վարչություն
ՆՄՄԿՎ՝	նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն
ՌԳՍՊՎԳՎ՝	ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն
ԻԱՓՎ՝	իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ՀՀԿԲ՝	հանրության հետ կապերի բաժին
ՆՈՒՀ՝	նախադպրոցական ուսումնական հաստատություն
ՀՈՒՀ՝	հանրակրթական ուսումնական հաստատություն
ՆՄԱՈՒՀ՝	նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն
ՄՄՈՒՀ՝	միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ԱՈՒԿ ծրագիր՝	«Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիր
ԱՄՈՒԿ ծրագիր՝	«Աջակցություն մասնագիտական ուսուցման կազմակերպմանը» ծրագիր
ԿԳՄՍՆ՝	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՊՁ՝	Հանրակրթության պետական չափորոշիչ
ԿԱՊԿՈՒ՝	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ԿՏԱԿ՝	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀՄԿ՝	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ նաև՝ տեսչական մարմին կամ ԿՏՄ) վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող, ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության (միջնակարգ կրթության), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված հիմնախնդիրներից են՝ կրթության մատչելիության, որակի և արդյունավետության ապահովման հետ կապված բազմապիսի խնդիրները, որոնք արմատական լուծումներ են պահանջում:

Նշված հիմնախնդիրների լուծմանն են ուղղված տեսչական մարմնի նախորդ տարիների և 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրերը:

Տեսչական մարմնի գործունեության 2025 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է՝ ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» օրենքով, հաշվի առնելով ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը, կրթության բնագավառի մարտահրավերներն ու զարգացման միտումները և տեսչական մարմնի նախորդ տարիների գործունեության արդյունքները՝ կրթության որակի, բովանդակության, վերջնարդյունքների հասանելիության, կառավարման և արդյունավետության ուղղություններով:

3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



4. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Համաձայն ԿՏՄ գործունեության տարեկան ծրագրի՝ վերահսկողության արդյունավետության բարելավմանը և վերահսկողության ոլորտներում կրթության որակի

բարձրացմանը միտված աշխատանքների շրջանակում իրականացվել են մի շարք գործառույթներ, որոնք՝ աշխատանքային պարտականություն համարվելուց զատ, ընդունում ենք որպես ձեռքբերում.

1. Տեսչական մարմնի ստուգաթերթերի վերակշռավորում և ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության լրամշակում՝ ըստ պետական քաղաքականության սկզբունքների

ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքների հիման վրա ուսումնական հաստատությանը բովանդակային գնահատական տալու, առկա ռիսկերը կառավարելու և ռիսկերի նվազեցմանն ուղղված հետագա քայլերը պլանավորելու նպատակով իրականացվել են ստուգաթերթերի վերակշռավորման և ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության լրամշակման աշխատանքներ՝ համապատասխան ոլորտը կարգավորող հիմնական օրենքում պետության կողմից երաշխավորված սկզբունքների համաձայն: Մշակվել է ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման նոր մոդել, որը տեսչական մարմնին հնարավորություն կտա պարզել, թե ուսումնական հաստատության կողմից կատարված խախտումները հանգեցնում են արդյոք վերոնշյալ սկզբունքների խախտման:

ԿՏՄ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը, նախադպրոցական կրթության և հանրակրթության ոլորտների լրամշակված և վերակշռավորված ստուգաթերթերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից: Նախնական մասնագիտական կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտների լրամշակված և վերակշռավորված ստուգաթերթերի նախագծերը ներկայացվել են Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ:

2. Վերահսկողության ոլորտների ստուգաթերթերում ստուգման նոր ձևաչափի ներդրում, ինչպես նաև համապատասխան գործիքակազմի (սյունակաշարերի) մշակում, փորձարկում և կիրառում

Ուսումնական հաստատություններում անցկացվող ստուգումներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ստուգաթերթերում առանձնացվել են այն հարցերը,

որոնց պահանջների կատարումը միայն փաստաթղթային եղանակով ստուգելը բավարար չէ: Հանրակրթության ոլորտի ստուգաթերթերում այդպիսի հարցերը 109-ն են, նախադպրոցական կրթության ոլորտի ստուգաթերթերում՝ 67-ը, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում՝ 13-ը: Նշված հարցերի պահանջների կատարումը ստուգելու համար մշակվել է նոր գործիքակազմ՝ սյունակաշարեր (ռուբրիկ):

Սյունակաշարերից 4-ական փորձարկվել են 20 ՀՈՒՀ-երում, 4-ական՝ 12 ՆՈՒՀ-երում և 13-ը՝ 1 ՆՄԱՈՒՀ-ում: Փորձարկման արդյունքում սյունակաշարերը լրամշակվել են: Հանրակրթության ոլորտի սյունակաշարերի փորձարկումների արդյունքների վերաբերյալ վերլուծությունները տրամադրվել են ԿԳՄՍ նախարարին և ՀՈՒՀ-երի տնօրեններին:

Սյունակաշարերի կիրառումը՝ որպես ստուգման նոր ձևաչափ՝ ներառվել է հանրակրթության, նախադպրոցական կրթության ոլորտների ստուգաթերթերում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների լրամշակված, վերակշռավորված ստուգաթերթերի նախագծերում:

3. Օրենսդրական նախաձեռնություններ

«Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» օրենքի նախագծում նախատեսվել է հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար լիցենզավորման համապատասխան կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պահանջների և պայմանների նկատմամբ վերահսկողություն: Օրինագիծը ներկայացվել է հանրային քննարկման, որում ներառվել են ԿՏՄ կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ԱՄՈՒԿ ծրագրի իրականացման հայեցակարգ

Հայեցակարգում հիմնավորվել է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ԱՄՈՒԿ ծրագրի իրագործման անհրաժեշտությունը, սահմանվել են ծրագրի նպատակները, խնդիրներն ու դրանց հաղթահարման միջոցները, ծրագրի իրականացման փուլերն ու ժամանակացույցը:

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտների ԱՄՈՒԿ ծրագրի դասալսման գործիքակազմ

ԱՄՈՒԿ ծրագիրը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում սկսելու նպատակով մշակվել է դասալսման գործիքակազմը՝ դասալսման ձևաթուղթը, դասալասողի եզրակացության ձևաչափը, դասալսողի կատարած աշխատանքի գնահատման թերթիկը: Գործիքակազմը կփորձարկվի 2024 թվականի IV եռամսյակում ստուգվող 2 ուսումնական հաստատություններում: Փորձարկման արդյունքում, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն գործիքակազմի լրամշակման աշխատանքներ:

6. ԿՏՄ կողմից իրականացվող ստուգումների անցկացման ուղեցույց

ԿՏՄ կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Տեսչական մարմինների մասին» օրենքներով սահմանված կարգով և ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված ԿՏՄ կանոնադրության համաձայն անցկացվող ստուգման ընթացակարգը նկարագրելու, տեսչական մարմնի ծառայողներին և շահառուներին օգնելու նպատակով:

7. ՀՈՒՀ-երի ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթուղթ

Լրամշակվել է ՀՈՒՀ-երի ներառական կրթական (ուսումնական, ֆիզիկական) միջավայրի գնահատման ձևաթուղթը, որը կիրառվել է 2024 թվականի ստուգումների ընթացքում:

8. Համագործակցություն

Էթիկայի դպրոցի հետ կնքվել է հուշագիր՝ ԿՏՄ աշխատակիցների հետ վերապատրաստումների անցկացման, արդյունավետ հաղորդակցման հմտությունների տրամադրման, երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ծրագրերի իրականացման, տեսչական մարմնի աշխատակիցների աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով: Հուշագրի շրջանակում Էթիկայի դպրոցի ներկայացուցիչները մասնակցել են ԿՏՄ կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումներին:

Կայացել են հանդիպումներ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) ներկայացուցիչների հետ:

Ձեռք է բերվել պայմանավորվածություն ԱՄՆ ՄԶԳ ռազմավարական հաղորդակցության աջակցության Քեմոնիքս ծրագրի շրջանակներում տեխնիկական աջակցությունների և վերապատրաստումների իրականացման վերաբերյալ:

Նախատեսվում է համագործակցություն ՄԱՎԵՏԱ («Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում» ծրագիր) ծրագրի ներկայացուցիչների հետ, որի նպատակն է գյուղատնտեսության և հարակից ոլորտների մասնագետների և ուսանողների գիտելիքների ու հմտությունների բարելավումը:

9. Թվայնացման աշխատանքների ընթացք

«Ինստիգեյթ մոբայլ» կազմակերպության և ԿՏԱԿ-ի հետ համատեղ իրականացվող՝ տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման աշխատանքների թվայնացման գործընթացը հանրակրթության և նախադպրոցական կրթության ոլորտների մասով գրեթե ավարտուն է (80%):

10. Օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ

Առկա է ՀՀ կառավարության և քաղաքականություն մշակող պետական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի (**2022թ.՝ 27, 2023թ.՝ 53, 2024թ.՝ 84)**

օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ԿՏՄ կողմից ներկայացված առաջարկությունների թվի դրական դինամիկա նախորդ երկու համապատասխան ժամանակահատվածների համեմատ (նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ՝ աճ 58%-ով):

11. Բռնության կանխարգելման արագ արձագանքման խումբ

Հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում բռնության (այդ թվում՝ բուլինգի) դեպքերի բացահայտման կամ դրանց ռիսկի կանխարգելման, դիմումներին կամ ահազանգերին արագ արձագանքման նպատակով ստեղծվել է խումբ, հաստատվել խմբի աշխատակարգը:

12.Խորհրդատվության նոր ձևաչափ

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի իրազեկման և խորհրդատվական միջոցառումների ժամանակ կազմակերպվել են պանելային քննարկումներ:

13. ԿՏՄ անձնակազմի կարողությունների զարգացում

ԿՏՄ բոլոր ծառայողները մասնակցել են USAID Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից կազմակերպված հետևյալ վերապատրաստման դասընթացներին.

- Մեդիագրագրություն.
- Հանրային խոսք.
- Տվյալների հավաքագրում, ստուգում և վերլուծություն.
- Վիզուալիզացիա.
- Ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում հաղորդակցության համակարգման միջգերատեսչական հաղորդակցությունը.

- Տվյալների մշակումը և վերլուծությունը ռազմավարական հաղորդակցության աջակցման նպատակով,

ինչպես նաև, ԿՏՄ-ում՝ հետևյալ թեմաներով երկշաբաթյա վերապատրաստումներին.

- Առարկայական նոր ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան դասի որակի գնահատում.
- Ուսումնական պլանի կազմման սկզբունքներ.
- Կրթական գործընթացի կազմակերպման որակի գնահատման գործիքակազմի (ձևաթղթերի) մշակում՝ նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում.
- Ուսումնական հաստատության միջավայրի գնահատում՝ ՀՀ չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը նպաստելու տեսանկյունից.
- ՀՀ չափորոշչի սկզբունքների և կարողունակությունների զարգացմանը համապատասխան թեմատիկ գրավոր աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններ.
- ՀՀ չափորոշչի համատեքստում դասալսման մեթոդաբանության ներկայացում.
- «Teach» գործիքի կիրառման առանձնահատկությունների ներկայացում:

Միաժամանակ, ԿՏՄ ծառայողները մասնակցել են Միջազգային Հանրապետական ինստիտուտի (International Republican Institute) կողմից կազմակերպված «Առաջնորդության հորիզոններ. կառավարման և փափուկ հմտությունների ակադեմիա» եռամսյա ծրագրին:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՏՄ-ն 2025 թվականին նախատեսում է՝

- Վերահսկողության ոլորտներում ստուգումներ իրականացնել ըստ ռուբրիկների:

- Ըստ ստուգումների արդյունքների՝ ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատումն իրականացնել ըստ կրթության բնագավառում պետության կողմից երաշխավորած սկզբունքների:

- Հանրակրթության ոլորտում ԱՈՒԿ ծրագիրն իրականացնել 58 դպրոցներում: Ծրագրի շրջանակում «Հայոց լեզու» («Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաների ուսուցումը ուսումնասիրել դպրոցներից 40-ում, իսկ 18-ում՝ մեկնարկել «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների ուսուցման ուսումնասիրման գործընթացը:

- Միջին մասնագիտական կրթության ոլորտում ԱՄՈՒԿ ծրագիրն իրականացնել 5 ուսումնական հաստատություններում՝ աջակցելով «Ձեռներեցություն» ուսումնական մոդուլը դասավանդող մասնագետներին, ինչպես նաև երիտասարդների սոցիալական ձեռներեցության զարգացմանը, ուսանողի մոտ ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտությունների ձևավորմանը:

- Տեսչական մարմնի աշխատակիցներին վերապատրաստել սյունակաշարերի կիրառման ուղղությամբ՝ ապահովելով անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով, որոնք կնպաստեն ռուբրիկների մշակման, լրամշակման, կիրառման, դրանց հիման վրա կատարված գնահատումների արդյունքների վերլուծական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

- Ամբողջացնել ռիսկերի գնահատման թվայնացված գործիքակազմը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտների մասով: Թվայնացված գործիքակազմը կնպաստի ԿՏՄ վերլուծական գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

---

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում պլանավորված կանխարգելիչ և իրազեկման բոլոր գործառույթներն իրականացվել են: Նախադպրոցական կրթության ոլորտում ըստ ստուգումների տարեկան ծրագրի ստուգումներ են իրականացվել 6 ՆՈՒՀ-երում, հանրակրթության ոլորտում՝ 61 ՀՈՒՀ-երում, միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 7 ՄՄՈՒՀ-ներում (1 ՄՄՈՒՀ-ի դեպքում ստուգում իրականացվել է թե՛ ըստ միջին մասնագիտական, թե՛ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի):



Իրականացված գործառույթների արդյունքում կազմված հաշվետվությունները հրապարակվել են տեսչական մարմնի պաշտոնական կայքում. http://www.eib.am/reports/:

6.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2024 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով նախադպրոցական կրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական բոլոր գործառույթներն իրականացվել են:

Ստուգված ՆՈՒՀ-երից մեկը մանկապարտեզ է, 5-ը՝ նախակրթարան: Ստուգված ՆՈՒՀ-երից 3-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների 57 խախումներ: Մանկապարտեզում իրականացված ստուգման ընթացքում կիրառվել են սյունակաշարեր:

Երևան քաղաքի 12 ՆՈՒՀ-երում իրականացվել են կրթադաստիարակչական միջավայրի որակի գնահատման 4-ական սյունակաշարերի փորձարկումներ՝ տեսչական մարմնի կողմից նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված պահանջների ապահովման մակարդակի գնահատման նպատակով: Փորձարկման արդյունքում իրականացվել են սյունակաշարերի լրամշակման աշխատանքներ:

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել է 6 կանխարգելիչ միջոցառում (2՝ հեռավար, 4՝ առկա): Մասնավորապես՝

-ԿՏՄ ստուգումների ժամանակացույցում ընդգրկված 6 մանկապարտեզների տնօրենների համար իրականացվել է 1 հեռավար խորհրդատվություն՝ ստուգաթերթերի, ՀՀ օրենսդրության պահանջների (ինչպես նաև՝ դրանցում կատարված փոփոխությունների) մասին իրազեկելու և հնարավոր խախտումները կանխելու նպատակով,

- տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակիցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ իրավագիտակցության բարձրացման նպատակով ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի և ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումների աշխատակիցների և 87

նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների համար իրականացվել է 5 (1՝ հեռավար, 4՝ առկա) խորհրդատվություն:

Տնօրենների կողմից հնչեցված հարցերը հիմնականում վերաբերել են՝

- *ստուգման ընթացակարգին,*
- *փարատարիք խմբերի ձևավորմանը,*
- *նախակրթարանում կրթության կազմակերպմանը,*
- *մեթոդիստի հաստիքի անհրաժեշտությանը նախակրթարանի սաների կրթության և զարգացման գործընթացում,*
- *մանկավարժական աշխատողների մրցույթի ընթացակարգին:*

Միջոցառումների արդյունքները ներառվել են ԿՏՄ գործունեության վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններում (տես՝ http://www.eib.am/reports/):

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել է 5 վարչական վարույթ: 4 վարույթների արդյունքում ՆՈՒՀ-երի տնօրեններին տրվել են կարգադրություններ, 1 վարույթ կարճվել է:

Իրականացված վարույթների արդյունքում **5** ՆՈՒՀ-երում արձանագրվել է **42** խախտում, որոնք վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրություններով տրվել է **20** հանձնարարական:

6.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2024 թվականի գործունեության ծրագրով հանրակրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման բոլոր գործառույթներն իրականացվել են: Ստուգումներ են իրականացվել 61 ՀՈՒՀ-երում: Խախտում արձանագրվել է բոլոր ՀՈՒՀ-երում, կազմվել է 61 (100%) ակտ: Ստուգումների արդյունքում արձանագրվել է 1542 խախտում:

21 ՀՈՒՀ-երում իրականացված ստուգումների շրջանակում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից: Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ տրվել են 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ ուսումնասիրվել են նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների տարեկան գնահատականները:

Վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով 2024 թվականի I կիսամյակում ստուգված 20 ՀՈՒՀ-երում ԱՈՒԿ ծրագրի շրջանակում իրականացվել են դասալսումներ: Իրականացված գործառույթի արդյունքների վերաբերյալ վերլուծությունները տրամադրվել են լիազոր մարմինների ղեկավարներին և ՀՈՒՀ-երի տնօրեններին:

Դասալսումներն իրականացվել են այն դասարաններում, որտեղ տրվել են գրավոր աշխատանքներ: Մրցութային կարգով ընտրված մասնագետների (դասալսողների) ներգրավումը իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում ներկայացրել են սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման, կրթության

բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից յուրաքանչյուր դպրոցի մասով ներկայացվել են ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, տրվել են կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ:

2024 թվականի առաջին երեք եռամսյակներում ստուգված 61 ՀՈՒՀ-երում իրականացված ստուգումների շրջանակում կիրառվել է հանրակրթական ուսումնական հաստատության ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթուղթը: Նշված ձևաթղթով գնահատում իրականացվել է 46 ՀՈՒՀ-երում, մնացած 15-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ չեն եղել: Գնահատման արդյունքների վերլուծությունները ներկայացվել են լիազոր մարմիններին՝ ԿԳՄՍ նախարարին, մարզպետներին, Երևանի քաղաքապետին:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է կանխարգելիչ (աջակցման, խորհրդատվական), իրազեկման 7 հեռավար միջոցառում ՀՀ 117 ՀՈՒՀ-երի տնօրենների մասնակցությամբ:

2024 թվականի II եռամսյակում ԿՏՄ կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումների շրջանակում՝ ՀՀ մարզերի 20 ՀՈՒՀ-երում իրականացվել է 4-րդ դասարանների սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատում: Գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունը տրամադրվել է ԿԳՄՍ նախարարին և լիազոր մարմինների ղեկավարներին:

Վերոնշյալ գործընթացին զուգընթաց նույն ՀՈՒՀ-երում իրականացվել է գրադարանավարի աշխատանքի գնահատման 4 ռուբրիկների փորձարկում: Փորձարկման արդյունքների վերաբերյալ վերլուծությունը տրամադրվել է ԿԳՄՍ նախարարին:

Հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի համապատասխան գրությունը՝ 2024 թվականի I եռամսյակում տեսչական մարմնի նախաձեռնությամբ ՀՀ 9 ՀՈՒՀ-երի նկատմամբ հարուցվել և իրականացվել են վարչական վարույթներ՝ սովորողների տնային ուսուցման գործընթացի իրականացման փաստացի վիճակը պարզելու նպատակով: Վարչական վարույթների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերվել են բոլոր 9 դպրոցներում, որոնց վերաբերյալ կազմվել է 9 վարչական ակտ՝ կարգադրություն:

Իրականացված վարույթների արդյունքում նշված **9** ՀՈՒՀ-երում արձանագրվել է **525** խախտում, որոնք վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրություններով տրվել է **87** հանձնարարական:

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ-ում ստացված դիմումների, ահազանգերի հիման վրա իրականացվել է 24 վարչական վարույթ: 16 ՀՈՒՀ-երի նկատմամբ հարուցված վարույթների արդյունքում տնօրեններին տրվել են կարգադրություններ, 6 վարույթ կարճվել է, 2 վարույթի դեպքում ընդունվել է որոշում:

Իրականացված վարույթների արդյունքում 24 դպրոցներից **22**-ում արձանագրվել է **87** խախտում, որոնք վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրություններով տրվել է **35** հանձնարարական:

6.3.ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2024 թվականի գործունեության ծրագրով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման բոլոր գործառույթներն

իրականացվել են: Ստուգումներ իրականացվել են 7 ՄՄՈՒՀ-ներում, որոնցից մեկում՝ թե՛ միջին մասնագիտական, թե՛ նախնական մասնագիտական կրթական ծրագրերով:

Խախտումներ արձանագրվել են թե՛ նախնական մասնագիտական, թե՛ միջին մասնագիտական կրթական ծրագրերի ստուգման արդյունքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) գնահատվել է կրթական գործընթացի որակը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի:

Իրականացվել է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով, ուղարկվել են ուսումնական հաստատությունների տնօրեններին:

Հաշվետու ժամանակահատվածում ԿՏՄ-ում ստացված դիմումների հիման վրա 3 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նկատմամբ հարուցվել է **3** վարչական վարույթ: 2 վարույթների դեպքում ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կարգադրություններ, 1 վարույթ կարճվել է:

Իրականացված վարույթների արդյունքում 2 ուսումնական հաստատություններում արձանագրվել են **13** խախտումներ, որոնք վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրություններով տրվել են **3** հանձնարարականներ:

Ստուգաթերթերի, ստուգումների և նախնական մասնագիտական, միջին մասնագիտական կրթության ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառման) վերաբերյալ իրավական, մասնագիտական և մեթոդական աջակցություն ապահովելու նպատակով՝ ԿՏՄ աշխատակիցների կողմից ՀՀ 71 ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ իրականացվել է 4 (1 հեռավար, 3՝ առկա) կանխարգելիչ միջոցառում:

Տնօրենների կողմից բարձրացված հարցերը վերաբերել են ստուգումների ընթացակարգին, ուսումնական հաստատությունների կառավարման խորհրդի գործառույթներին, ներքին գնահատման տեղեկանքին, ուսանողների կրթաթոշակին, կադրերի ընտրությանը և այլն:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող գործոններն ըստ ոլորտների ներկայացվում են ստորև:

7.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝



7.1.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով իրականացված ծրագրային 3 ստուգումների արդյունքում արձանագրվել է 57 խախտում: Առկա խնդիրները հիմնականում վերաբերում են՝

- ֆիզիկական միջավայրին՝ 27 (47%) խախտում 3 ՆՈՒՀ-ում,
- մեթոդիստի պաշտոնային պարտականությունների չկատարմանը՝ 12-ը (21%) խախտում 1 ՆՈՒՀ-ում,
- մանկավարժական աշխատողների թափուր պաշտոնների մրցույթի ընթացակարգին՝ 9-ը (16%) խախտում 1 ՆՈՒՀ-ում:

Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտում են երեխաների կրթական իրավունքի պահպանմանը՝

- ՆՈՒՀ-երում ֆիզիկական միջավայրի՝ նախադպրոցական կրթության չափորոշչի պահանջներին անհամապատասխանություն (մարզադահլիճի,

երաժշտության դահլիճի, բակում, հողամասում խաղային սարքավորումների, խաղերի խաղալիքների, գրադարանի բացակայություն),

- մանկապարտեզում՝ մանկավարժական աշխատողների հաստիքների բացակայության կամ պակաս հաստիքային միավորի առկայության պատճառով համապատասխան պաշտոնային պարտականությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում,
- նախակրթարաններում՝ մեթոդիստի, երաժշտության դաստիարակի, ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքների բացակայությունը՝ հետևաբար համապատասխան պաշտոնային պարտականությունների չկատարում,
- նախակրթարանի դաստիարակի հաստիքային միավորների տրամադրման չափի կարգավորումների բացակայություն (4 կամ 5 ժամյա աշխատանքային ռեժիմի դեպքում):

7.1.2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված 6 ստուգումներից 3-ի արդյունքում արձանագրված 57 խախտումներից 27-ի վերաբերյալ տրվել են հանձնարարականներ: 27 հանձնարարականներից 4-ում կատարման ժամկետ է սահմանվել 2024 թվականի II, իսկ 23-ում՝ 2024 թվականի IV եռամսյակը:

Հանձնարարականների 74%-ը (20) վերաբերել են ՆՈՒՀ-ի ֆիզիկական միջավայրը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանեցմանը:

Հանձնարարականների կատարման վերաբերյալ գրություն է ստացվել 1 ՆՈՒՀ-ից, ըստ որի՝ տրված 4 հանձնարարականները կատարվել են:

7.1.3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտի ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով՝

- կմշակվի «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական կրթական միջավայրի գնահատման» ձևաթուղթ, որը տարվա ընթացքում կկիրառվի ստուգվող ՆՈՒՀ-երում,
- կլրամշակվեն ՆՈՒՀ-երի ստուգումների ընթացքում կիրառվող ռուբրիկները,
- կիրականացվեն ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ,
- նախադպրոցական կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ բացատրական աշխատանքներ կիրականացվեն ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, ՀՀ Լոռու մարզի Սպիտակի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում:

Համաձայն 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ կիրականացվեն ստուգումներ 17 ՆՈՒՀ-երում: Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

7.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

7.2.1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հանրակրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- մանկավարժական աշխատողների նշանակումներին՝ 351 (23%) խախտում 48 (79%) դպրոցներում,

- խորհրդակցական մարմինների ձևավորմանն և գործունեությանը՝ 305 (20%) խախտում՝ 37 (61%) դպրոցներում,

- մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը կամ չկատարմանը՝ 221 (14%) խախտում 26 (43%) դպրոցներում:

Վերահսկողական գործառույթների շրջանակում ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրված «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաների գրավոր աշխատանքների արդյունքներն[1] այսպիսին են.



Միջին գնահատականը կազմել է 4.5 («Բավարար») միավոր:

[1] Գնահատումն իրականացվել է 10 միավորային սանդղակով՝ 1-3 միավոր՝ «Անբավարար», 4-6 միավոր՝ «Բավարար», 7-8 միավոր՝ «Լավ», 9-10 միավոր՝ «Գերազանց»:



Միջին գնահատականը կազմել է 4.1 («Բավարար») միավոր:

Ստուգված 20 դպրոցներում՝ ԱՈՒԿ ծրագրի շրջանակում՝ դասալսողների ներկայացրած եզրակացությունների, ինչպես նաև սովորողների գրավոր աշխատանքների արդյունքների հիման վրա գնահատվել են նաև ուսուցիչները[2]:

Այս համատեքստում նշված **20** դպրոցներում դասալսումներ են իրականացվել **110**՝ հայոց լեզվի և գրականության **61** և մաթեմատիկայի **49** ուսուցիչների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվել է առնվազն 5 դասալսում:

Ուսուցիչների գնահատման միջինացված արդյունքներն, ըստ առարկաների, ներկայացված են ստորև (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Ուսուցիչների գնահատման միջին արդյունքներ՝ ըստ առարկաների

Բնութագրիչներ	*Հայոց լեզու*	*Մաթեմատիկա*
Ուսուցիչների՝ ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում	**2.9 («Լավ»)**	**3 («Լավ»)**
Դասերի արդյունավետությունը	**3.3 («Լավ»)**	**3.3 («Լավ»)**
Ուսուցչի դասավանդած բոլոր դասարաններում ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (0-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականը (0-10%՝ 4, 11-20%՝ 3, 21-35%՝ 2, 36% և ավելին՝ 1)	**1.5 («Բավարար»)**	**1.6 («Բավարար»)**

[2] Ուսուցիչների գնահատումն իրականացվել է 4 միավորային (4՝ «Գերազանց», 3՝ «Լավ», 2՝ «Բավարար», 1՝ «Անբավարար») սանդղակով:

Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորը (0-10%՝ 4, 11-20%՝ 3, 21-35%՝ 2, 36% և ավելին՝ 1)	**1.4 («Անբավարար»)**	**1.6 («Բավարար»)**
Ուսուցիչների ընդհանուր գնահատական	***2.3 («Բավարար»)***	***2.3 («Բավարար»)***

Դասալսողների կողմից ներկայացված դասալսումների եզրակացությունների հիման վրա, յուրաքանչյուր դպրոցի մասով, կատարվել են վերլուծություններ: Վերլուծությունների արդյունքում վերհանված հիմնական խնդիրները, ըստ գնահատման ձևաթղթի բաժինների, այսպիսին են՝

Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր

- Դասարանի կահավորանքը որոշ դեպքերում հարմարեցված չէ ուսումնական գործունեության տեսակներին, ինչպես նաև բոլոր սովորողների կարիքներին:
- ՏՀՏ միջոցները, ինչպես նաև ուսումնաօժանդակ նյութերը դասաժամին հիմնականում կամ չեն կիրառվում, կամ կիրառվում են ոչ արդյունավետ:
- Դասաժամի ոչ ճիշտ պլանավորումը, մասնավորապես՝ ժամանակի ոչ ճիշտ բաշխումը, աշխատանքային կանոնների ոչ հստակ սահմանումը հաճախ հանգեցնում են դասի արդյունավետության նվազեցմանը:

Բ) Դասավանդում

- Ոչ բոլոր սովորողներն են ներգրավված դասերին:
- Դասերին հաճախ հստակ չեն սահմանվում դասի նպատակները, վերջնարդյունքները, որոշ դեպքերում դասարանային առաջադրանքները և կիրառվող մեթոդները միտված չեն վերջնարդյունքների ապահովմանը:
- Թույլ են արտահայտված միջառարկայական կապերը և կապը առօրյայի հետ:
- Սովորողների ընկալման կամ իմացության մակարդակի ստուգումը հաճախ մակերեսային է իրականացվում, չեն պահանջվում հիմնավորումներ:

- Չեն կիրառվում գնահատման տարբեր ձևեր և մեթոդներ, հաճախ գնահատականները չեն հիմնավորվում կամ չեն մեկնաբանվում:
- Հետադարձ կապի ապահովումը որոշ դեպքերում թույլ է:

Գ) Կարողունակությունների ձևավորում

- Հաճախ առաջադրվող հարցերն ու առաջադրանքները, դասերին կիրառվող մեթոդները միտված չեն սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:
- Ոչ բոլոր սովորողներին են տրվում իրենց սեփական կարծիքը հայտնելու, ընտրության, դերեր և պարտականություններ ստանձնելու հնարավորություններ:

Դպրոցներում ներառական կրթական միջավայրի գնահատման գործընթացն իրականացվել է ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի համաձայն, որը բաղկացած է «Ուսումնական միջավայր», «Ֆիզիկական միջավայր» հավելվածներից: Հավելվածները բաղկացած են ներառական կրթական գործընթացին վերաբերող տարբեր բնութագրիչներից և դրանց համապատասխան գնահատման չափանիշներից: Բնութագրիչների գնահատումն իրականացվում է նախորդող 3 ուսումնական տարիների տեղեկատվության հիման վրա:

Ուսումնական միջավայրի գնահատման արդյունքում պարզվել է, որ դպրոցներում առկա են բացթողումներ արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկված միջոցների և ուսումնառության լրացուցիչ պայմանների ապահովման, հաստատության երկարօրյա խմբերում սովորողների ընդգրկման, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման և մատուցման, սովորողի՝ ԱՈՒՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփման ուղղություններով: Առկա են խնդիրներ ԱՈՒՊ-ով սահմանված աջակցության ծառայությունների տրամադրման, սովորողի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության, կրթական ծառայությունների մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության

բարձրացման հարցերով առաջարկներ ներկայացնելու, սեփական նախաձեռնությամբ լրացուցիչ գործառույթներ իրականացնելու ուղղություններով:

Առանձնացվել են դպրոցների կողմից արդյունավետ իրականացվող և զարգացման ենթակա գործառույթներն՝ ըստ գնահատման արդյունքների:

Արդյունավետ իրականացվող գործառույթները, չնայած առկա բացթողումներին, հիմնականում վերաբերում են ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար իրականացվող ծառայություններին՝ **դպրոցական և տարածքային մակարդակներում, ինչպես նաև ֆիզիկական միջավարի ապահովմանը վերաբերող բնութագրիչներին՝ դպրոցում առկա մատչելի ուսումնական նյութերի հասանելիությանը,** դիդակտիկ նյութերի, գրատախտակի գրառումների, էկրանին ցուցադրվող նյութերի **տեսանելիությանը,** մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար առանձնացված կահավորված տարածքների առկայությանը:

Զարգացման ենթակա գործառույթները հիմնականում վերաբերում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար ***ֆիզիկական միջավայրի ապահովմանը:***

Դպրոցներն հիմնականում ապահովված չեն՝

- ԿԱՊԿՈՒ սովորողների համար օժանդակող տեխնոլոգիաներով և սարքավորումներով բոլոր դասարանների, լաբորատորիաների, սանհանգույցների, ճաշարանի, գրադարանի և այլ տարածքների նույնականացման համար գրավոր կամ պատկերային ցուցանակներով և նշաններով (տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար՝ բրայլյան գիր, ուռուցիկ տառատեսակով տպագիր և ուռուցիկ պատկերագրով),
- տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար՝ դեղին գծերով, ուղենշող սալիկներով, տարածական կողմնորոշման ձայնային ազդանշաններով,
- սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ անմիջապես դպրոցի մուտքի մոտ, աստիճանների կողքից՝ չսայթաքող, դիմացկուն թեքահարթակով,
- հարկից հարկ տեղափոխվելու համար մատչելիությունն ապահովող վերելակով, այլ սարքավորումներով և հարմարանքներով,

- սովորողների (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների) ազատ տեղաշարժն ու կրթական գործընթացին նրանց ակտիվ մասնակցությանը հարմարեցված մատչելի միջավայրով, այդ թվում՝ մատչելի տարածքով և գույքով դասասենյակներով, լաբորատորիաներով, ճաշարանով, մարզադահլիճով, գրադարանով և սանհանգույցներով,
- ռեսուրս-սենյակով՝ առնվազն 25-30 քմ տարածքով, ապահովված բնական և արհեստական լուսավորությամբ, անվտանգ, հարմարավետ գույքով, պարագաներով, սարքավորումներով:

Ելնելով գնահատման արդյունքներից՝ առաջարկվել է համապատասխան լիազոր մարմիններին միջոցներ ձեռնարկելու զարգացման ենթակա գործառույթները (բնութագրիչները) բարելավելու ուղղությամբ:

ՀՀ մարզերի 20 ՀՈՒՀ-երում իրականացվել է 4-րդ դասարանների 854 սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատում: Գնահատման արդյունքների վերլուծությամբ պարզվել է.

- Սովորողների միջին գնահատականը կազմել է 63,8% տոկոսային միավոր (51%-75%-ը՝ «Բավարար»): Սովորողները միջինում ճիշտ են պատասխանել թեստի 14 հարցերից 8-ին: Միջինը բնութագրում է սովորողների լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների մակարդակը: Մասնակիցների կեսից ավելին գնահատվել է 64.3%-ից բարձր՝ այսինքն ճիշտ է պատասխանել առնվազն 9 հարցի: Ըստ գնահատման արդյունքների՝ «Գերազանց» է գնահատվել մասնակիցների 7%-ը, «Լավ»՝ 25%-ը, «Բավարար»՝ 40%-ը, «Անբավարար»՝ 28%-ը:

- 4-րդ դասարանցիների համար գիտահանրամատչելի տեքստերը գեղարվեստական տեքստերի համեմատ դժվար հասանելի չեն: Միաժամանակ, սովորողների (ըստ տեքստերի ժանրերի) գնահատականների ուսումնասիրությունից պարզվել է, որ բարձր միավոր ստանալ գեղարվեստական տեքստին վերաբերող թեստից՝ չի նշանակում բարձր արդյունք գրանցել գիտահանրամատչելի տեքստին վերաբերող թեստից:

- Ըստ հարցերի տեսակների՝ գնահատման արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սովորողները չեն դժվարանում սեփական միտքը ճիշտ ձևակերպել: Ըստ հակիրճ պատասխան պահանջող բաց հարցերի՝ սովորողների միջին գնահատականը կազմել է 68%, իսկ ընտրովի պատասխաններով հարցերի դեպքում՝ 61%:

- Առկա է «Անբավարար» գնահատված սովորողների տոկոսային թվի նվազման դինամիկա 2022 թվականի համեմատ: Միաժամանակ, գնահատմանը մասնակցած սովորողների 28%-ի մոտ առկա են խնդիրներ ՀՊՁ-ի՝ հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևավորման մասով:

Սովորողների՝

- **1%-ը չի կարողանում տեքստից տեղեկատվություն դուրս բերել,**
- **32%-ը լիարժեք կարողանում է տեքստից տեղեկատվություն դուրս բերել,**
- **6%-ը չի կարողանում պարզ հետևություններ անել,**
- **11%-ը լիարժեք կարողանում է պարզ հետևություններ անել,**
- **26%-ը չի կարողանում փոխկապակցել մտքեր և տեղեկություններ, ստեղծել միջտեքստային կապեր,**
- **28%-ը լիարժեք կարողանում է փոխկապակցել մտքեր և տեղեկություններ, ստեղծել միջտեքստային կապեր,**
- **5%-ը չի կարողանում գնահատել տեքստի բովանդակությունն ու ոճական առանձնահատկությունները,**
- **28%-ը լիարժեք կարողանում է գնահատել տեքստի բովանդակությունն ու ոճական առանձնահատկությունները:**

ՀՀ Տավուշի մարզի դեպքում՝ նույն բաղադրիչների ստուգման արդյունքները ավելի բարձր են:

Նույն գործընթացի շրջանակում իրականացված ՀՈՒՀ-ի գրադարանավարի աշխատանքի գնահատման 4 ռուբրիկների փորձարկման արդյունքների վերլուծության համաձայն՝

1. Գրադարանավարը հիմնականում չի մասնակցում ուսումնական գործընթացների կազմակերպմանը:
2. Տարեկան ծրագրում գրանցված ոչ բոլոր գործառույթներն են իրականացվում, այնուհետև հաշվետվություններում ամփոփվում, որոշ դեպքերում առկա չեն գրադարանավարի տարեկան աշխատանքային ծրագիր, պլան, հաշվետվություններ:
3. Չեն իրականացվում սովորողների համագործակցային, ստեղծագործական, հետազոտական և այլ հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:
4. Չեն իրականացվում սովորողների և մանկավարժական աշխատողների անհատական խորհրդատվություն և սպասարկում:
5. Առկա չէ էլեկտրոնային քարտադարան, չի իրականացվում տեղեկատվության տրամադրում էլեկտրոնային կրիչների միջոցով:
6. Առկա չեն մանկավարժական մեթոդական ձեռնարկներ, ուսուցչին աջակցող մասնագիտական գրականություն:
7. Գրադարանից օգտվող սովորողների միջին ցուցանիշը ցածր է:
8. Գրադարանավարները լավ չեն տիրապետում իրենց պաշտոնային պարտականություններին:

Ընթերցանության գնահատման և նույն ՀՈՒՀ-երի գրադարանավարների աշխատանքի գնահատման ռուբրիկների փորձարկման արդյունքների ուսումնասիրությունից պարզվել է, որ սովորողների գրանցած արդյունքները հիմնականում կապ չունեն գրադարանավարի աշխատանքի հետ:

ՀՀ 9 ՀՈՒՀ-երում սովորողների տնային ուսուցման գործընթացի իրականացման փաստացի վիճակը պարզելու նպատակով իրականացված վարչական վարույթների արդյունքների վերլուծությամբ պարզվել է՝

– 9 ՀՈՒՀ-երում արձանագրվել է «Հանրակրթության մասին» օրենքի, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող **8** նորմատիվ իրավական ակտերի **33** պահանջների **525** խախտում.

– արձանագրված խախտումները վերաբերել են տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման իրավական հիմքերի անհամապատասխանությանը, կրթության կազմակերպման որակին և անարդյունավետությանը, ինչպես նաև վարչական և մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունների չկատարմանը.

– խախտումները վերացնելու նպատակով տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան կարգադրություններով դպրոցների տնօրեններին տրվել է պարտադիր կատարման **87** հանձնարարական.

– համաձայն վարույթներում ներգրավված փորձագետների եզրակացությունների՝ **165** սովորողներից **145–ի** տնային ուսուցման գործընթացն իրականացվել է սահմանված կարգով, սակայն ոչ արդյունավետ, **14–ինը**՝ սահմանված կարգի խախտումներով և ոչ արդյունավետ և ևս **6** սովորողներինը՝ սահմանված կարգով և բավարար արդյունավետությամբ:

Հանրակրթության ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտում են սովորողների կրթական իրավունքի պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը՝

- **համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող վարչական, մանկավարժական աշխատողների առկայությունն է,**
- **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ֆիզիկական միջավայրի ոչ բավարար ապահովվածությունը,**
- **ՀՊՉ-ի՝ հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևավորման մասով խնդիրների առկայությունը,**
- **իրենց պաշտոնային պարտականություններին չտիրապետող գրադարանավարների առկայությունը,**
- **տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման իրավական հիմքերի անհամապատասխանությունը, կրթության կազմակերպման անարդյունավետությունը:**

7.2.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացված ծրագրային 61 ստուգումների արդյունքում արձանագրվել է 1542 խախտում:

Խախտումների վերացման նպատակով տրվել է 48 դպրոցների տրվել է 162 հանձնարարական (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՍՏՈՒԳՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ	ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ
61	**1542**	**162**

Ստուգումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ուղարկվել են ԿԳՄՍ նախարարին, հրապարակվել են ԿՏՄ պաշտոնական կայքում: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ գրություններ են ուղարկվել համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին՝ չկատարված կամ մասամբ կատարված հանձնարարականների վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու և տեսչական մարմնին տեղեկացնելու առաջարկով:

ԱՈՒԿ ծրագրի շրջանակում իրականացված դասալսումների, գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ հասցեական առաջարկներով՝ տրամադրվել են դպրոցների տնօրեններին և լիազոր մարմինների ղեկավարներին:

Ներառական կրթական միջավայրի գնահատման արդյունքների վերլուծությունները ներկայացվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին՝ զարգացման ենթակա գործառույթներն (բնութագրիչները) ըստ անհրաժեշտության բարելավելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու և արդյունքների մասին տեսչական մարմնին տեղեկացնելու վերաբերյալ առաջարկով:

ՀՀ մարզերի 20 ՀՈՒՀ-երում իրականացված 4-րդ դասարանների սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունը տրամադրվել է ԿԳՄՍ նախարարին և լիազոր մարմինների ղեկավարներին: Նույն գործառույթի շրջանակում իրականացված ՀՈՒՀ-ի գրադարանավարի աշխատանքի գնահատման 4 ռուբրիկների փորձարկման արդյունքների վերլուծությունները՝ վեր հանված խնդիրներով և համապատասխան առաջարկներով տրամադրվել են ԿԳՄՍ նախարարին և ՀՈՒՀ-երի տնօրեններին:

ՀՀ 9 ՀՈՒՀ-երում սովորողների տնային ուսուցման գործընթացի իրականացման փաստացի վիճակը պարզելու նպատակով իրականացված վարչական վարույթների արդյունքների վերլուծությունը՝ կրթության կազմակերպման արդյունավետությանը վերաբերող առաջարկներով տրամադրվել է ԿԳՄՍ նախարարին և համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին:

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում, ըստ ստուգումների ծրագրի, ստուգված բոլոր ՀՈՒՀ-երում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ:

Հանձնարարականներ ունեցող 48 ՀՈՒՀ-երից 36-ի դեպքում տրված 95 հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2024 թվականի առաջին 3 եռամսյակներում: Տրված 95 հանձնարարականներից կատարվել են 48-ը (51%), կատարվել են մասամբ՝ 31-ը (33%), չեն կատարվել 7-ը (7%): Հարկ է նշել, որ 4 ՀՈՒՀ-եր չեն ներկայացրել գրություններ 9 (9%) հանձնարարականների կատարման վերաբերյալ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

ՏՐՎԱԾ	ԿԱՏԱՐՎԱԾ	ՄԱՍԱՄԲ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ	ՉԿԱՏԱՐՎԱԾ
95	**48**	**31**	**7**

Հանրակրթության ոլորտում մասամբ կատարված հանձնարարականները հիմնականում վերաբերում են կադրային նշանակումներին:

7.2.3. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում 2025 թվականին նախատեսված ստուգումների ընթացքում սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին կտրվեն գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և

«Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից:

Գրավոր աշխատանքների արդյունքները, որպես վիճակագրական տվյալներ, կգործածվեն տեսչական մարմնի կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներում:

Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ կտրվեն 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ կուսումնասիրվեն նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների տարեկան գնահատականները:

2025 թվականին հանրակրթության ոլորտում ԱՈՒԿ ծրագիրը նախատեսվում է իրականացնել 58 ՀՈՒՀ-երում: Այդ ՀՈՒՀ-երից 40-ում ծրագիրը կիրականացվի գործող ձևաչափով, իսկ 18-ի դեպքում կուսումնասիրվեն «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների ուսուցումը:

Այսպիսով, 2025 թվականին նախատեսվում է ԱՈՒԿ ծրագիրն իրականացնել ստուգվող 58 ՀՈՒՀ-երում: Մասնավորապես՝

- ուսումնական պարապմունքների լսումներ, դասավանդողի և սովորողի գործողությունների դիտարկում, գրավոր առաջադրանքների միջոցով սովորողների գիտելիքների գնահատում.
- դասավանդողի մանկավարժական-մեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում.
- ուսումնական պարապմունքների լսումների, սովորողների գիտելիքների գնահատման արդյունքների միջին ցուցանիշի հիման վրա տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում, մասնագիտական կարծիքի (հաշվետվետվություն, եզրակացություն) ներկայացում և այլն:

Գործընթացի նկարագիրը

- Դասալսումները կիրականացվեն այն դասարաններում, որտեղ կտրվեն գրավոր աշխատանքներ:
- Դասալսում իրականացնող մասնագետներին ներկայացվող պահանջներին բավարարող անձանց հետ կիրականացվի հարցազրույց, որի արդյունքում առաջնահերթությունը կտրվի առնվազն առաջին աստիճանի որակավորման տարակարգ ունեցող կամ կամավոր ատեստավորում անցած մասնագետներին:
- Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում կներկայացնեն սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից առավել ճշգրիտ կներկայացվեն հանրակրթական դպրոցներում ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները:
- Ուսումնական հաստատություններին կներկայացվեն կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ, իսկ կրթության պետական կառավարման լիազոր մարմնին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կրթության որակի առկա վիճակի մասին հաշվետվություններ, վերլուծական եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ստուգման գործընթացի շրջանակներում ՀՈՒՀ-երում կիրականացվի ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ ՀՄԿ-ի հետ լրամշակված գործիքակազմի:

2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում ստուգումները կիրականացվեն ռուբրիկների կիրառմամբ:

Համաձայն 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն 60 ՀՈՒՀ-երում: Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ

ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

ՀՀ 20 դպրոցներում կիրականացվի 4-րդ դասարանների սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատում՝ հանրակրթության պետական չափորոշչով, ինչպես նաև «Մայրենի» առարկայի առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների, ընթերցանության կարողությունների ձևավորման վրա ազդող խնդիրները վերհանելու նպատակով: Արդյունքները կհամադրվեն ԿՏՄ կողմից 2024 թվականին իրականացված նույնաբովանդակ գործընթացի արդյունքների հետ:

Կիրականացվեն ՀՈՒՀ ստուգաթերթերի և կրթության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

7.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

7.3.1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- պետական ամփոփիչ քննությունների կազմակերպմանը և անցկացմանը՝ 68 (39%) խախտում 7 (100%) հաստատություններում,
- ուսանողների ընդունելությանը՝ 41 (23%) խախտում 6 (86%) հաստատություններում,
- կրթության շարունակականությանը՝ 14 (8%) խախտում 3 (43%) հաստատություններում:

Ստուգումների շրջանակում իրականացվել է մասնագիտությունների կրթական գործընթացի որակի գնահատումներ՝ ըստ մշակված ձևաթղթերի:

Կրթության որակի գնահատման տվյալների վերլուծության արդյունքում առանձնացվել են այն խնդիրները, որոնք կարող են ազդել միջին մասնագիտական հաստատություններում մրցունակ մասնագետների պատրաստման որակի վրա: Ըստ գնահատման արդյունքների համադրման ու վերլուծության, ձևաթղթերի և հարցաթերթերի տվյալների՝ հաստատություններում առկա են գործընթացներ, որոնց արդյունավետությունը նկատելի է (ուժեղ կողմեր), սակայն միաժամանակ առկա են գործընթացներ, որոնք ունեն բարելավման անհրաժեշտություն (զարգացման ենթակա գործառույթներ).

1. Քոլեջներում՝ որպես ուժեղ կողմեր հիմնականում նշվել են.

- *Վերջին 3 ուսպարում տվյալ մասնագիտության ուսանողների թվի աճը.*
- *Պրակտիկայի ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների թվի աճը.*
- *Սոցիալական գործընկերների ներգրավվածությունը պետական որակավորման հանձնաժողովում.*
- *Ուսանողների բավարարվածության բարձր մակարդակը՝*
  - ✓ *տեսական և գործնական գիտելիքներից,*
  - ✓ *գիտելիքներին, կարողություններին, հմտություններին համապատասխան՝ դասավանդողների գնահատումներից,*
  - ✓ *հաճախումների նկատմամբ իրականացվող վերահսկողությունից:*
- *Կարիերայի կենտրոնի արդյունավետ գործունեությունը ուսանողների աշխատանքի տեղավորման ուղղությամբ:*

2. *Քոլեջներում՝ որպես զարգացման ենթակա գործառույթներ հիմնականում նշվել են.*

- *Ավարտական կուրսի ուսանողների առաջադիմության ցածր մակարդակը անցած երեք ուսումնական տարիների ընթացքում.*

- Գործնական հմտությունների զարգացման հնարավորությունների պակասը.

- Դասավանդողների վերապատրաստման բացակայությունը վերջին տարիների ընթացքում.

- Նյութատեխնիկական բազայի և մասնագիտական գրականության անբավարար մակարդակը՝ ուսումնական գործընթացում.

- Ուսանողների իրազեկման ցածր մակարդակը քոլեջի կանոնակարգերի, ծառայությունների և ոլորտի վերաբերյալ.

- Կարիերայի կենտրոնի համագործակցության խնդիրները ուսանողների հետ.

- Սոցիալական գործընկերների պասիվ ներգրավվածությունը կրթական գործընթացում:

Զարգացման ենթակա գործառույթների բարելավման նպատակով գնահատված ուսումնական հաստատությունների տնօրեններին ներկայացվել են հասցեական առաջարկություններ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում առկա հիմնական ռիսկերը վերաբերում են՝ ուսումնական հաստատություններում կրթական գործընթացների խախտումներով կազմակերպմանը:

Համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների դեպքում հաստատություններում սահմանված կարգի խախտումներով են ընթանում սովորողների ընդունելության, տեղափոխման, պետական ամփոփիչ քննությունների կազմակերպման և անցկացման, մանկավարժական աշխատողների վերապատրաստման և այլ գործընթացներ:

Թվարկված գործընթացները անմիջական ազդեցություն ունեն ուսանողների կողմից կրթական ծրագրերի յուրացման և կրթության որակի վրա:

7.3.2. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված 7 ստուգումների արդյունքում արձանագրվել է 176 խախտում, տրվել է 6 հանձնարարական (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՍՏՈՒԳՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ	ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ
7	**176**	**6**

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում ստուգված բոլոր 7 հաստատություններում էլ արձանագրվել են ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ, 5 հաստատությունների դեպքում՝ հանձնարարականներ չեն տրվել: Ստուգված 7 հաստատություններից 2-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է հաշվետու ժամանակահատվածում:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

ՏՐՎԱԾ	ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ	ԿԱՏԱՐՎԱԾ
5	**4**	**1**

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ընթացքի մեջ են կադրային նշանակումներին վերաբերող հանձնարարականները:

7.3.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2025 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում կիրականացվեն՝

- համաձայն ԿՏՄ 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ ՀՀ 4 ՆՄԱՈՒՀ-ում և 11 ՄՄՈՒՀ-ներում: Ստուգումների ընթացքում կկիրառվեն սյունակաշարեր:
- ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատումներ՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների: Գնահատումը կիրականացվի՝ ըստ լիցենզիայով հատկացված և իրականացվող որևէ մասնագիտության:
- ՆՄԱՈՒՀ և ՄՄՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ դասախոսներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասավանդման ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծմանը միտված առաջարկությունների ներկայացման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է ԱՄՈՒԿ ծրագիրը իրականացնել 5 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի

կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

8. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (I, II, III ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ)

Հաշվետու ժամանակահատվածում ԿՏՄ կողմից իրականացվել է 74 ստուգում, որը կազմում է 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 130 ստուգումների 57%-ը: Իրականացված ծրագրային ստուգումներից 6-ը ՆՈՒՀ-եր են, 61-ը՝ ՀՈՒՀ-եր, 7՝ ՄՄՈՒՀ-ներ:

2024 թվականի առաջին 3 եռամսյակներում ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումներ չեն իրականացվել:

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ լրամշակվել են «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և բոլոր ոլորտների ստուգումների անցկացման ստուգաթերթերը: Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության և ԿՏՄ վերահսկողության ոլորտների ստուգումների անցկացման ստուգաթերթերի լրամշակումներն իրականացվել են համապատասխան ոլորտը կարգավորող հիմնական օրենքում պետության կողմից երաշխավորված սկզբունքների համաձայն:
- ԿՏՄ կողմից ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ, դիտարկումներ՝ 84 իրավական ակտերի վերաբերյալ:

10. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ իրազեկելու՝ հնարավոր խախտումները կանխելու, հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ԿՏՄ 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներն իրականացվել են:

Պահպանվում է կանխարգելիչ, իրազեկման միջոցառումների ձևաչափը: Ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի համար իրականացվող խորհրդատվական և իրազեկման միջոցառումներից առաջ մասնակիցներին նախապես տրամադրվում են խորհրդատվական հանդիպման օրակարգը, ներկայացվելիք նյութերը: Մասնակիցները, օրակարգին ծանոթանալուց հետո, իրենց հարցերը գրավոր ձևով ուղղում են ԿՏՄ կայքէջին, իսկ հանդիպման ընթացքում՝ ստանում դրանց սպառիչ պատասխանները:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի համար իրազեկման և խորհրդատվական նպատակով կազմակերպվել են պանելային քննարկումներ:

Կանխարգելիչ միջոցառումների շրջանակում ՀՀ մարզերի 20 ՀՈՒՀ-երում իրականացվել է 4-րդ դասարանների 854 սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատում: Գնահատման արդյունքների վերլուծությունները տրամադրվել են ԿԳՄՍ նախարարին, ՀՀ մարզպետներին:

Վերահսկողության ոլորտներում իրականացված կանխարգելիչ և իրազեկման գործառույթների քանակական պատկերն, ըստ վերահսկողության ոլորտների, ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՆՈՒՀ	1
ՀՈՒՀ	7
ՆՄԱՈՒՀ ԵՎ ՄՄՈՒՀ	4
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐ	5

Հավելված 1

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2024 թվականի նոյեմբերի 22-ի N 7-Լ որոշման

11. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում 2025 թվականի խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1	2	3	4	5	6
1.	ԿՏՄ 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 17 ՆՈՒՀ-երում ստուգումներ	ՆՈՒՀ-երի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
2.	ՆՈՒՀ-ի ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի մշակում և փորձարկում ստուգվող հաստատություններում	ՆՈՒՀ-ի ներառական կրթական միջավայրի ապահովմանն աջակցություն	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
3.	Համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում (ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, ՀՀ Լոռու մարզի Սպիտակի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարաններ)	ՏԻՄ աշխատակիցների՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ իրավագիտակցության բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՀՀԿԲ ՌԳՍՊՎԳՎ	II, III եռամսյակներ

4.	ԿՏՄ 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 60 ՀՈՒՀ-երում ստուգումներ	ՀՈՒՀ-երի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
5.	Ստուգվող 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ, 11-րդ դասարաններում «Հայոց լեզու» («Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից դասալսումներ (ԱՈՒԿ ծրագիր)	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	I, II, IV եռամսյակներ
6.	Ստուգվող 18 ՀՈՒՀ-երում 9-րդ, 11-րդ դասարաններում «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից դասալսումներ (ԱՈՒԿ ծրագիր)	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	I, II, IV եռամսյակներ
7.	Ստուգվող առնվազն 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից (գրավոր աշխատանք)	Ուսումնառության որակի բարելավմանը, չափորոշչային պահանջների ապահովմանն աջակցում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
8.	Ստուգվող ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ լրամշակված ձևաթղթի	ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի ապահովմանն աջակցություն	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Լրամշակում՝ I եռամսյակ, փորձարկում՝ տարվա ընթացքում
9.	ՀՀ 20 ՀՈՒՀ-երում 4-րդ դասարանների սովորողների՝ մայրենի լեզվով լուռ ընթերցելու և ընթերցածն ընկալելու, եզրահանգումներ անելու կարողությունների գնահատում:	«Մայրենի» առարկայի առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների, ընթերցանության կարողությունների ձևավորմանը աջակցում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում

10.	Հանրությունից ստացված դիմումների, հարցումների, բողոքների քննարկում, պարզաբանում, ուսումնասիրություն, ստուգում	Դիմումներում բարձրացված հարցերի լուծում, խնդիրների վերհանում	ՀՎ ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
11.	ԿՏՄ 2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 4 ՆՄԱՈՒՀ-ներում և 11 ՄՄՈՒՀ-ներում ստուգում	ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի, կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
12.	Ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանն աջակցություն	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
13.	Ստուգվող ՄՄՈՒՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանն աջակցություն	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
14.	ԱՄՈՒԿ ծրագրի իրականացում 5 ուսումնական հաստատություններում	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
15.	Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմվող փաստաթղթերի նախագծերի, կրթության	Կրթության բնագավառի օրենսդրության բարելավմանն աջակցում	ԻԱՓՎ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում

	որակի և չափորոշիչների բարելավման, ինչպես նաև գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ներկայացված կարծիքների, առաջարկությունների իրավական քննարկում և դրա հիման վրա հիմնավորված գրավոր եզրակացության ներկայացում				
16.	Ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա տեսչական մարմնի կողմից ստուգումների իրականացման տարեկան ծրագրի կազմում և սահմանված կարգով հաստատման ներկայացում	Վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և ուսումնական հաստատություններ	ՌԳՍՊՎԳՎ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	IV եռամսյակ
17.	Վերհսկողական գործառույթների արդյունքում բացահայտված խախտումների վերացման նպատակով տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված կատարողականների (գրությունների) հիման վրա ռիսկերի վերագնահատում (ըստ անհրաժեշտության)	Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ուսումնական հաստատությունների ռիսկայնության որոշում և դասակարգում՝ առկա տեղեկատվության և սահմանված չափորոշիչների հիման վրա	ՌԳՍՊՎԳՎ	---	Տարվա ընթացքում
18.	Իրականացված կանխարգելիչ, իրազեկման և վերհսկողական գործառույթների ազդեցության գնահատում	Իրականացված գործառույթները որքանով են նպաստել ԿՏՄ կանոնադրական նպատակների կատարմանը	ՀՀԿԲ	-----	I, II կիսամյակներ
19.	Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ուսումնական հաստատություններին տրված՝ նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և	Հետադարձ կապի ապահովում	ՀՎ ՆՄՄԿՎ	ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Տարվա ընթացքում

	խախտումների վերաբերյալ տրված հանձնարարականների (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ (ըստ անհրաժեշտության)				

Հավելված 2

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2024 թվականի նոյեմբերի 22-ի N 7-Լ որոշման

12. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1	2	3	4	5	6
1.	2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված հանրակրթական ուսումնական հաստատությունների (ՀՈՒՀ) տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման և հաճախակի հանդիպող խախտումների վերաբերյալ (առկա/հեռավար)	Ստուգումներից առաջ ՀՈՒՀ ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման(իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ	ՀՀԿԲ	I և III եռամսյակներ

2.	2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) տնօրենների համարխորհրդատվական հանդիպում՝ ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման և հաճախակի հանդիպող խախտումների վերաբերյալ (առկա/հեռավար)	Ստուգումներից առաջ ՆՈՒՀ ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման(իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ	ՀՀԿԲ	I եռամսյակ
3.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների ծնողական խորհուրդների ներկայացուցիչների հետ հանդիպումներ	Ծնողական խորհուրդների իրավունքների և պարտականությունների մասին օրենսդրության պահանջների իրավակարգավորումների իրազեկում	ՀՎ	ՀՀԿԲ	II և IV եռամսյակներ
4.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական խորհուրդների ներկայացուցիչների հետ հանդիպումներ	Աշակերտական խորհուրդների իրավունքների և պարտականությունների մասին օրենսդրության պահանջների իրավակարգավորումների իրազեկում	ՀՎ	ՀՀԿԲ	Տարվա ընթացքում
5.	2025 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ոլորտների օրենսդրության պահանջների պահպանման և հաճախակի հանդիպող խախտումների վերաբերյալ	Ստուգումներից առաջ ստուգումների և ոլորտների օրենսդրության պահանջների պահպանման (իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը	ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	I և III եռամսյակներ
6.	Խորրդատվական հանդիպումներ ուսանողների հետ	Իրավունքների և պարտականությունների մասին իրազեկում՝ նոր ձևաչափով (ըստ անհրաժեշտության գործընկերների	ՆՄՄԿ	ՀՀԿԲ	I և II կիսամյակներ

		ներգրավում)			
7.	Բաց քննարկումներ (հանդիպումներ) հաճախ հանդիպող խախտումների վերաբերյալ	Ստուգումներից հետո ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ ՆՄՄԿ	ՀՀԿԲ	I և II կիսամյակներ
8.	Գործընկեր և շահագրգիռ կառույցների հետ քննարկումներ (կլոր սեղան)՝ էթիկայի դպրոցի հետ համագործակցության շրջանակում	ԿՏՄ գործառույթների ներկայացում, ոլորտում առկա խնդիրների քննարկում և իրազեկվածության բարձրացում	ՀՀԿԲ	ՀՎ	I և II կիսամյակներ